12 հուլիսի 2012 թվականի N 830 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 954-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 954-Ն որոշմամբ հաստատված հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N 1 աղյուսակի 2-րդ տողի՝

ա. 1-ին սյունակում «գ/դմ^3 հայկական կոնյակներում, հայկական կոնյակի սպիրտներում» բառերը փոխարինել «գ/լ անջուր սպիրտում» բառերով,

բ. 2-րդ սյունակում «1.0» և «1.2» թվերը փոխարինել «2.0» թվով.

2) N 2 աղյուսակում՝

ա. 1-ին տողից հետո լրացնել հետևյալ տողերը.

«

Բարձր սպիրտների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկված ըստ իզոամիլ սպիրտի, մգ/լ անջուր սպիրտում	1700-5000
Ալդեհիդների զանգվածային խտությունը՝ վերա-հաշվարկված ըստ քացախաթթվական ալդեհիդի, մգ/լ անջուր սպիրտում	50-500
Միջին էթերների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկված ըստ քացախաթթվական էթիլ եթերի, մգ/լ անջուր սպիրտում	500-2700
Ցնդող թթուների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկված ըստ քացախաթթվի, մգ/լ անջուր սպիրտում, ոչ ավելի	2000
Ցնդող միացությունների (ցնդող թթուներ՝ վերահաշ-վարկված ըստ քացախաթթվի, ալդեհիդներ՝ վերա-հաշվարկված ըստ քացախաթթվական ալդեհիդի՝ որպես քացախաթթվական ալդեհիդի և 1.1-դիէթոք-սիէթանի (ացետալ) մեջ քացախաթթվական ալդեհիդի պարունակության գումար, բարձր սպիրտներ՝ պրոպանոլ-1-ը, բութանոլ-1-ը, բութանոլ-2-ը ու 2-մեթիլ-պրոպանոլ-1-ը՝ հաշվարկված որպես առանձին նյութեր, իսկ 2-մեթիլբութանոլ-1-ը ու 3-մեթիլբութանոլ-1-ը՝ հաշվարված որպես առանձին նյութեր կամ դրանց գումար և քացախաթթվական էթիլ եթեր) զանգվածային խտությունը, մգ/լ անջուր սպիրտում, ոչ պակաս	1250

»,

բ. 2-րդ տողում «գ/դմ^3» բառերը փոխարինել «գ/լ» բառերով,

գ. 3-րդ և 4-րդ տողերում «մգ/դմ^3» բառերը փոխարինել «մգ/լ» բառերով,

դ. վերջին տողում «խտության՝ $^{\pm}$0,2 %» բառերը փոխարինել «խտությունից՝ $^{\pm}$2գ/լ» բառերով.

3) N 3 աղյուսակում՝

ա. «մգ/100սմ^3 անջուր սպիրտի» բառերը փոխարինել «մգ/լ անջուր սպիրտում» բառերով,

բ. 2-րդ տողում «180-600» և «170-500» թվերը համապատասխանաբար փոխարինել «1800-6000» և «1700-5000» թվերով,

գ. 3-րդ տողում «3-50» և «5-50» թվերը համապատասխանաբար փոխարինել «30-500» և «50-500» թվերով,

դ. 4-րդ տողում «50-250» և «50-270» թվերը համապատասխանաբար փոխարինել «500-2500» և «500-2700» թվերով,

ե. 5-րդ տողում «80» և «250» թվերը համապատասխանաբար փոխարինել «800» և «2000» թվերով,

զ. 5-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

Ցնդող միացությունների զանգվածային խտությունը, մգ/լ անջուր սպիրտում, ոչ պակաս	1250	1250

»,

է. 6-րդ տողի 2-րդ և 3-րդ սյունակներում «3.0» թիվը փոխարինել «30» թվով,

ը. 7-րդ, 8-րդ և 9-րդ տողերում «մգ/դմ^3» բառերը փոխարինել «մգ/լ» բառերով.

4) N 7 աղյուսակում՝

ա. 2-րդ և 3-րդ տողերում «գ/դմ^3» բառերը փոխարինել «գ/լ» բառերով,

բ. 4-րդ տողում «մգ/դմ^3» բառերը փոխարինել «մգ/լ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: